# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Դիավանտ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/20 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Pentax | Pentax 8020 INSPIRA | 8020 INSPIRA | Pentax | "Սարքը նախատեսված է էնդոսկոպիկ տարբեր հետազոտությունների համար: Տեսահամակարգը համատեղելի է գաստրոսկոպերի, դուոդենոսկոպների, բրոնխոսկոպների, կոլոնոսկոպերի, ինչպես նաև ուլտրաձայնային էնդոսկոպների հետ: Կառավարումը հնարավոր է իրականացնել ստեղնաշարից, ոտքի անջատիչից և պրոցեսորի սենսորային էկրանից: Պատկերները և տեսանյութերը էլեկտրոնային ձևով պահպանելու համար USB հիշողության քարտի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | միացման հնարավորություն: Թույլ է տալիս պահված պատկերը պրոցեսորի հիշողությունից մոնիտորի և վիդեո պրոցեսորի սենսորային էկրան դուրս բերել, նաև պատկերները երկակի էկրանի ռեժիմում ցուցադրել: Վիդեպրոցեսորը ունի Էնդոսկոպի նույնականացման հնարավորություն, կարմիր գույնի կարգաբերում, սպիտակ գույնի հավասարակշռում մեկ հպումով, ունի պատկերի էլեկտրոնային եղանակով ուժեղացնելու հնարավորություն և ապահովի HD և 4K որակով պատկերավորում: Լույսի աղբյուրը` ներկառուցված: Արհեստական բանականության համակարգը, որը ներառված է լրակազմում, նախատեսված է օգնելու բժիշկներին կոլոնոսկոպիայի ժամանակ` հայտնաբերել լորձաթաղանթի պաթոլոգիական փոփոխությունները, ինչպիսիք են պոլիպների հնարավոր առկայությունը ուղիղ աղիքում կամ հաստ աղիքում: Վիդեոգաստրոսկոպը ապահովում է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 4K պատկերավորում, համատեղելի է առաջարկվող վիդեո պրոցեսորի հետ։ Դիտման ուղղությունը՝ ուղիղ դիտում, Դիտման անկյունը՝ 140 աստիճան, Դիստալ ծայրի տրամագիծը 9,9 մմ, աշխատանքային մասի երկարությունը՝ 1030 մմ։ Էնդոսկոպի բռնակի վրա առկա են ծրագրավորվող կոճակներ, դիստալ ծայրին ներկառուցված է բարձր որակի գունավոր CCD մատրիցա, 4K թողունակությամբ, պատկերը փոխանցվում է 4K որակով։ Առկա է ջրամատակարարման լրացուցիչ ուղի։ Վիդեոգաստրոսկոպ HD պատկերավորում ապահովող, համատեղելի է առաջարկվող վիդեո պրոցեսորի հետ։ Դիտման ուղղությունը՝ ուղիղ դիտում, դիտման անկյուն 140 աստիճան, դիստալ ծայրի տրամագիծը 9,9 մմ, առկա է նաև ջրամատակարարման լրացուցիչ ուղի։ Վիդեոկոլոնոսկոպ 4K-ն համատեղելի է առաջարկվող վիդեո պրոցեսորի հետ։ Դիտման ուղղությունը՝ ուղիղ դիտում, դիտման անկյունը՝ 170 աստիճան, դիստալ ծայրի տրամագիծը՝ 13,2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մմից, աշխատանքային մասի երկարությունը` 1650 մմ, էնդոսկոպի բռնակի վրա առկա են ծրագրավորվող կոճակներ, դիստալ ծայրին ներկառուցված է բարձր որակի գունավոր CCD մատրիցա, 4K թողունակությամբ, պատկերը փոխանցվում է 4K որակով, Էնդոսկոպի ներդրման խողովակը ունի եռագոտի աստիճանական կոշտություն: Առկա է ջրամատակարարման լրացուցիչ ուղի: Վիդեոկոլոնոսկոպ HD պատկերավորում ապահովող համատեղելի է առաջարկվող վիդեո պրոցեսորի հետ: Դիտման ուղղությունը` ուղիղ դիտում, դիտման անկյունը 140 աստիճան, դիստալ ծայրի տրամագիծը 13,2 մմից, աշխատանքային մասի երկարությունը 1650մմից: Վիդեոդուոդենոսկոպը համատեղելի է առաջարկվող վիդեոպրոցեսորի հետ: Դիտման ուղղությունը` 100 աստիճանի կողային դիտում, ետ դիտում` 10 աստիճան, դիստալ ծայրի տրամագիծը` 13,5 մմ, Աշխատանքային մասի երկարությունը` 1240 մմից: Պետք է |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Диавант в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ԷԱՃԾ ՊՁԲ-2024/20 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | հնարավորություն ունենա աշխատելու էլեկտրավիրաբուժական գործիքների հետ, վերև/ներքև թեքվածության ֆիքսման հնարավորություն, աջ/ձախ թեքվածության ֆիքսման հնարավորություն: Հերմետիկության չափիչ: Համակարգի հետ տրամադրվում է աշխատանքի համար 1 հատ հերմետիկության չափիչ ավտոմատ սարք: Էնդոսկոպիկ կանգնակը նախատեսված է առաջարկվող համակարգի ամբողջական տեղադրման և ֆիքսման համար: Բժշկական մոնիտորը համատեղելի է առաջարկվող վիդեոպրոցեսորի հետ: Մոնիտորը պետք է լինի բժշկական նշանակության, 4K վիզուալիզացիայով: Մոնիտորի անկյունագիծը 32 դյույմ: Էնդոսկոպիկ ինսուֆլյատոր, նախատեսված՝ ածխածնի երկօքսիդի համար, կիրառելի մեծահասակների և մանկահասակների համար: Պարունակում է աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բաղադրիչները։ Էնդոսկոպիկ իրրիգացիոն պոմպ։ Պարունակում է աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր բաղադրիչները։ Էնդոսկոպիկ ասպիրատորը նախատեսված է ախտորոշիչ և վիրահատական միջամտությունների համար։ Պարունակում է աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր բաղադրիչները։ Էլեկտրավիրաբուժական կոագուլյատոր նախատեսված էնդոսկոպիկ և վիրահատական միջամտությունների համար։ Էլեկտրովիրաբուժական կոագուլյատորը ունի ENDO CUT ծրագիր և արգոն-պլազմային մոդուլի միացման հնարավորություն։ Լրակազմը պարունակում է բոլոր անհրաժեշտ պարագաները՝ ճկուն էնդոսկոպիայում օգտագործելու համար, նաև մոնոպոլյար և բիպոլյար, կտրման և կոագուլյացիայի, անոթների լիգացիայի ռեժիմներ և անհրաժեշտ պարագաներ։ Համակարգում ներառված յուրաքանչյուր սարքավորման համար առնվազն 12 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ամսվա երաշխիքային ժամկետ, ուսուցումը, տեղադրումը իրականացվում է մատակարարի կողմից: Որակի վկայականների առկայություն՝ ISO13485: Արտադրանքը ունի նաև CE Mark (Directive 93/42/EEC) որակավորում:" |